

Թիւ 25988
Օգոստոս 17, 1978

Մեծայարդ
Տոքթ. Վարդան Այնամեան
Թորոնթօ.

Յարգելի Տոքթ. Այնամեան

Ստացած ենք Ցուլիս 21, 1978 թուակիր ձեր եւ տասնըերկու այլ ազգայիններու ստորագրութեամբ նամակը:

Ուրախ եղանք կարդալով ձեր ցոյց տուած հետաքրքրութիւնը եւ նախանձախնդրութիւնը՝ մեր Եկեղեցական եւ համայնքային կեանքին մասին:

Ինչպէս որ Առաջնորդարանի մեր գրասենեակին մէջ ձեզի ընկերացող բարեկամներուն հետ խօսեցանք՝ Թորոնթոյի մէջ երկրորդ ծուխի մը կազմութիւնը պիտի կառարենք օրինական միջոցներով:

Այս նպատակով, ինչպէս գրած ենք ձեզի, ժողովի հրաւիրած ենք Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ ծխական Խորհուրդը եւ կարգ մը այլ ազգայիններ: Տեղեկացուցած ենք քոլորին որ այդ ժողովը տեղի պիտի ունենայ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ սրահին մէջ, Երեքշաբթի Օգոստոս 29, երեկոյեան ժամը 8.00ին՝ նախազահութեամբ Առաջնորդի Փոխանորդ եւ Թեմական Խորհուրդի փոխ-զանձապահ Հոգշ. Տ. Յուսիկ ծ. Վրդ. Պաղատասեանի:

Ցոյս ունինք որ այս առաջին քայլը պիտի առաջնորդէ իրազործելու համար այն քոլոր բարի ցանկութիւններն ու արամադրութիւնները՝ զորս մենք եւ մեր համայնքի զաւակները ունինք Թորնթոյի մեր համայնքի բարգաւաճման եւ յառաջդիմութեան համար:

Հանեցէք մեր լաւագոյն բարեմադրութիւնները փոխանցել Ցուլիս 21 թուակիր նամակը ստորագրողներուն, որոնք վստահ ենք որ հաւատարմութեամբ եւ նուիրումով պիտի ծառայեն՝ երբ Թորոնթոյի մէջ երկրորդ ծուխ մը կազմելու ծրագիրը իրականանայ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ